



# Ա. ՉԱՏ ԽՕՄՔ

ՇԱԲԱԹ, 16 ՅՈՒՆԻՍ 1906, ԱԼԵԿՍԱՆԴՐԻԱ

## ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆԸ

Փա՛ռք Տիրոջ, Սահմանադրութեան և Տիար Յ. Շնորհքեանի, անցած կիրակի համեմատականի մնացած ընտրելիներու քուէարկութիւնն ալ կատարուեցաւ, նոյն միօրինակ կանոնաւորութեամբ և այս միջոցիս Ալեքսանդրիոյ հայ գաղութը օժտուած է տասնևութը պատուաբաժան երեսփոխաններով, որոնց առջև կը խոնարհինք իբրև ժողովրդին ներկայացուցիչները:

Ահաւասիկ ութը ընտրելիները իրենց ստացած քուէներուն թիւովը:

Տօքթ. Մ. Ժամկոչեան	412	քուէ
Տիար Սահակ Աբրահամեան	366	»
Վսեմ. Մինրան Խան Գալփայեան	340	»
Տիար Լևոն Մկրտիչեան	319	»
» Պերճ Օհանեան	307	»
» Լևոն Պէրպէրեան	292	»
» Յակոբ Աղնաւորեան	245	»
» Գէորգ Իրէքեան	237	»

Ընտրողական ժողովը ընտրութեանց ար-

դիւնքը տեղեկագրած է Գեր. Առաջնորդ հօր ի վաւերացում: Նորին Գերապատուութիւնը վաւերացնելէ յետոյ, պաշտօնագրով պիտի ծանուցանէ նաև տեղական կառավարութեան որպէսզի, ըստ նախապէս տրուած որոշման, կառավարութիւնը ևս վաւերացնէ Գաւառային երեսփոխանական ժողովը:

Ոմանք կ'ըսեն թէ առաջնորդը պէտք է նաև տեղեկագրէ Կ. Պոլսոյ պատրիարքարանին սոյն ընտրութիւնը, որպէսզի Կեզր. Վարչութիւնն ալ վաւերացնէ: Ըստ մեզ, ասիկա աւելորդ ձևակերպութիւն և անօգուտ ժամավաճառութիւն մըն է, մանաւանդ որ Կ. Պոլսոյ Կեզրոնական Վարչութիւնը որ և է օրինական հանգամանք չունի և բոլորովին ապօրէն է, քանի որ տասը տարիներէ ի վեր պաշտօնի գլուխ կը գտնուի, հակառակ սահմանադրական օրինաց, և միմիայն համըտական բռնակալ տնօրինութեամբ: Իր կողմէ եղած վաւերացում մը ըստ օրինի որ և է արժէք չկրնար ունենալ քանի որ ինք արդէն անվաւեր ու ապօրէն մարմին մըն է:

Ըստ մեզ լաւագոյն է հետևել Վսեմ. Պօղոս փառայի իմաստուն խորհրդին և այժմէն իսկ եզրպատօսի ազգային իշխանութիւնները դրնել Ս. Էջմիածնի հովանաւորութեան տակ, ինչպէս են Եւրոպայի, Ամերիկայի, Հնդկաստանի և

Պարսկաստանի բոլոր հայ գաղթականութիւնները: Այսպիսի կարգադրութիւն մը ապահովաբար պիտի արժանանայ եղիպտական կառավարութեան հաւանութեան և միանգամայն խիստ նպաստաւոր պիտի ըլլայ մեր տեղական ազգային շահերուն:

Ազգային արժանապատուութեան տեսակէտով ևս անշուշտ մեզի համար շատ պատուաբեր է վեհ. կաթողիկոսին սիրեցեալ հովանաւորութիւնը, քան թէ դաւաճան և ատեցեալ պատրիարքի մը և ստրուկ ու ապօրէն կեդր. վարչութեան մը նենգ ու աղաստ հովանաւորութիւնը:

Ալեքսանդրիոյ հայ ժողովուրդը պէտք է այս մասին իր ձայնը լսելի ընէ ամէն օրինաւոր միջոցներով:

## Ն Ո Ր Ը Ն Տ Ի Ր Ն Ե Ր Ը

### 1

#### Գ Ա Ռ Ն Ի Կ Չ Պ Ո Ւ Ք Ճ Ե Ա Ն

Ամէնէն ժողովրդականը ընտրութեանն մէջ, ըստ քուէներու վկայութեան: Երիտասարդ, աշխոյժ, գործունեայ և բանիրուն: Թռամվայի ընկերութեան զեր-տնօրէն և զեր նախախնամութիւն տոմսակազաճառ ըլլալու յետամուտ անգործ Հայերուն: Հնչակեաններուն համար Հնչակեան համակիր մըն է, Դաշնակցականներուն համար՝ Դաշնակցական համակիր մը և չէզոքներուն համար՝ չէզոք համակիր մը: Միակ թերութիւն մը՝ Բնամի չունի:

2

ԱՐՄԵՆԱԿ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ

Ելախոտի վաճառական և փորձառու ազգային կեանքին: Սահմանադրութեան այնչափ տեղեակ որ կ'ըսուի թէ ընտրողական ժողովին մէջ Տ. Յ. Շնորհքեանի մէկ սխալը ուղղած է օրինական կէտի մը մասին:

Ողջախոս ու խղճամբու Օգտակար եղած է իր ազգային պաշտօններուն մէջ մինչև հիմակ. ինչ որ բաւական ապահովութիւն մըն է ապագային համար ալ: Առատաձեւն ու բարեսիրտ, առանց ազմուկի:

3

Յ. ՄՈՒԹԱՖԵԱՆՅ

Միակ ուստանայ համալսարանական երեսփոխանը մեր նոր Տումային: Լուրջ, հանգիստու և պատկառելի: Ատենապետի կամ նախագահի կազապարին վրայ ձուլուած: Իբրև ներկայացուցիչ Մանթաշէֆի բեղրօլի տան՝ խիստ լուսամբա և մթութեան մէջ դործուած չիլ արտաքննութեալ հակառակորդ:

Գաւառային Երեսփոխանական ժողովի փարոսը ըլլալու սահմանուած:

4

ՀԱՅԿ ԷՔԻՉԼԷՐ

Մտերիմ խորհրդակիցը Տ. Մութաֆեանցի: Երկար տարիներ վարած է թաղականի կամ ինսամակալի պաշտօններ և միշտ սիրելի եղած է ժողովրդին: Վարիչի կարողութիւններ ունի. ի մէջ այլոց անձնական կառքը իր ձեռքով կը վարէ:

Խոնարհ է և գիւրամասնելի և ձեռքէն եկած օգնութիւնը չիմայր իրեն զիմովներուն:

Փաղթականութեան հոսանքին ատեն իր մատուցած ծառայութիւնները զինքը ժողովրդականացուցած են:

5

### ՄԻՆԻՍՏՐԱՆ ՏԱՄԱՏԵԱՆ

Նախկին յեղափոխական գործիչ, բանաստեղծ, գրագէտ, ճառախօս Ալեքսանդրիոյ սահմանադրական պայքարին ստեղծիչ պետերէն մին: Վեց տարիէ ի վեր օրէնքի գործադրութեան համար գրածները եթէ հաւաքենք, ութը փունթօ տաւերով մնծադիր 3000 էջերէ հատոր մը կը կազմուի, իսկ եթէ անոնց վրայ աւելցենք նոյն նպատակով խօսածներն ալ, այն ատեն հարկ կ'ըլլայ 6000 էջի վերածել հատորը, որուն տրպագրութեան ծախքը ապահովաբար վսեմ. Բարթոզ փաշան չէ որ պիտի նուիրէ:

Անյողողոզ ազգասէր, աննկուն սահմանադրական:

6

### ՅՈՎՀԱՆՆԵՍ ԾՆՈՐՀՔԵԱՆ

1860էն ետքը ծնած է, պարզապէս սահմանադրութիւնը հաստատուելէն յետոյ աշխարհ եկած ըլլալու համար: Գործի մը յաջողութեան սիրոյն յամառ պայքարող մը. յամառ՝ գործը շատ անգամ անյաջողութեան մատնելու աստիճան: Սրինապահութեան մասին իր մանրագին բժականգրութիւնը զինքը առաջնորդած է շատ անգամ ապօրէն արարքներ գործելու. օրինակ՝ Աղքատախնամի դրամներուն մինչև այսօր պանքայի մը մէջ պահելը: Շատ մը օգտակար ծրագիրներ ունի, բայց գործադրելու ժամանակ կը պակսի իրեն:

Զուարթ վայրկեաններուն՝ նուրբ հեզնոզ մըն է. գժբախտաբար այդ վայրկեանները սակաւագիւտ են: Յաջողակ գրող մը նաև, երբ ինչիւրը Սահմանադրու-

թիւնը պաշտպանելու և կամ անոր հակառակորդները հարուածելու վրայ է:

Կարելի է չսիրել զինքը, բայց անկարելի է չբարգել:

7

### Յ. ՄԱԻՂԱԼԵԱՆ

Էսնաֆ դատակարարի ներկայացուցելը պարկեշտութեան և պատուաւորութեան վիայականով մը զօրացած:

--Ազէկ մարդ է, շնորհքով մարդ է, պապա մարդ է, բարի մարդ է, ժողովրդին հալին տեղեակ մարդ է, խօսք հասկցող մարդ է, օգտակար մարդ է:

Ահա՛ իր ընտրութեան առթիւ եղած զանազան գնահատութիւնները զանազան անձերու կողմէ:

Կաշիի վաճառական, հողատէր և կալուածատէր է: Եկեղեցիին եկամուտներուն աչք չունի, ապահով քնացէ՛ք:

8

### ԱՐԹԻՆ ՊԵՅ ԲԷԻՉԵԱՆ

Տեղացի հայ շոջերուն ամէնէն պատուաբերներէն մին: Նախագահ տեղական խառն դատարանի մէկ ճիւղին: Ուսեալ, կրթեալ, զարգացեալ: Նախկին թաղական կամ խնամակալ: Խիստ ներկայանալի յաչ տեղական կառավարութեան և օտար անձնաւորութեանց, քիչ մը անտեղեակ ազգային կեանքին և սովորութեանց:

Նախորդ պայքարը մեծ մասամբ իրեն դէմ մղուած ըլլալով հանդերձ, այս անգամ քուէները զացին գտան զինքը և ցոյց տուին թէ ժողովուրդը սկզբունքի համար կուտայ էր և ո՛չ թէ անձերու դէմ:

9

### ՅԱԿՈՒ ՊԷՔԱՐԵԱՆ

Սահմանադրական մը Յ. Շնորհքեանի զպրոցէն:

Նախկին տեսուչ Ալեքսանդրիոյ Պողոսեան վարժարանին, այժմ պաշտօնեայ Մանթաչէֆ տան: Բանախօս: Իր մանագիտութիւնն է միթին՝ ներ բանալ. անոնց նախագահել և խօսք տալ Մ. Տամատեանի, Գաղափարները և կարծիքները հասուն, լուրջ, տրամաբանական, կշռա որ, հաստատ, գրեթէ քիչ մը կովկասեան՝ ինչպէս իր շեշտը:

Տեղական պայքարին գործօն ուժերէն մէկը և՛ դաժ է առաջին ժամէն և աշխատած է Օրէնքի յաղթանակին, ծովակալ Թօկոյի մը խոհեմ ու ճարտար աշարջութեամբը:

10

ԱԼԻՔՍԱՆ ԸՆՎԱՀԻՐՃԵԱՆ

Եգիպտոսի մէջ ծնած միակ սահմանադրականը: Կը սիրէ սահմանադրութիւնը առանց շատ մօտէն ճանչնալու: Սահմանադրութիւնն ալ փոխադարձաբար զայն կը սիրէ և ամէն ընտրութեանց ատեն չմոռնար պաշտօն տալու իրեն:

Չուարձախօս է և շատ անեկդոտներ ունի տեղացի հալ «երևելի»ներուն վրայ, զոր կը պատմէ երբ առանձին ըլլաք, խնդրելով հանդերձ որ իրմէ իմացած ըլլա՞նիդ մէկու մը չ'ըսէք:

Հնարիչ է, կազ չափելու համար նորահնար գործիք մը գտած է զոր մաքսային վարչութիւնը ընդունած և գործադրութեան զրած է: Այս գործիքին չընորհիւ մաքսին մէջ կազի գողութեան առաջքը առնուած է: Արդեօք Տ. Ընվահիրճեան չկրնա՞ր «եկամտաչափ» գործիք մըն ալ հնարել ի պէտս Առաջնորդարանին:

11

ՏՕԲԹ. Մ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

Համեմատականի առաջին մրցանակաւորը: Հա-

մակերկի անձնաւորութիւն մը, խարտեայ և սիրալիր ճարտար բժիշկ և մանկաբարձ, և մէն անգամ որ երեսփոխանական ժողովը խորհուրդ մը «յղանայ և երկնէ», ամէն անգամ որ ժողովին մէջ դժուարութիւն մը «ծնի», կամ ծրագիր մը «վիժի», Տօբթ. Ժամկաշխանի փորձ ճարտարութիւնը կրնայ օգտակար ըլլալ:

Սահմանադրական պայքարին համար չէ մարտնչած և սակայն զգուշաւոր համակրութեամբ մը հետեւած է, հետեւէն, Օրինասէրներու բանակին յառաջ-խաղացութեանց և վերջնական յաղթութեան օրը չէ թերացած աւելի մօտէն շնորհաւորելու սահմանադրական սպայակոյտը:

12

### ՍՍ.ՀԱԿ Ա.ԲԻՐԱ.ՀՍ.ՄԵԱՆ

Պոլսական թաղականի տիպար մը, Հասուն տարիքով և հաւանօրէն՝ խորհուրդներով, Հասութառու մը որ ազգասիրաբար ու քիչ մըն ալ ժամանակ անցնելու համար պիտի գայ ժողովներուն և միշտ համակարծիք պիտի ըլլայ ողջախոհութեան հետ:

Կալուածոց հոգաբարձու կամ եկեղեցւոյ մատակարար. ինչո՞ւ չէ:

13

### ՄԻ.ՀՐԱՆ Խ.ԱՆ ԳԱԼՖԱՅԵԱՆ

Ուրիշ պատիասելի անձնաւորութիւն մը, բառին ֆիզիքական և բարոյական նշանակութեամբը:

Պարսկական զգակի ներքեւ հայկական զլուխ մը: Մաքրակրօն սահմանադրականներուն աչքին գաւառիք մը համարուեցաւ, երբ ոգի ի բռին սահմանադրութեան համար կոռուելէ հոգը, անդամակցեցաւ Վրսեմ. Պօղոս փաշայի կազմած ինսամակալութեան: Իր սխալը շուտ քաւեց սակայն, քիչ յետոյ հրաժարելով:

Վսեմ. Գալիֆայեան Խան հիւպատոս է պարսկա-  
կան պետութեանն և միանգամայն ներկայացուիչ շատ  
մը հրուպական ընկերութեանց:

Իր ներկայութիւնը Գուառային Երեսփոխանական  
Ժողովին մէջ անհրաժեշտ էր: Սաանց իրեն խմբանը-  
կարը պահասաւոր և անարտամարան պիտի ըլլար:

14

### ԼԵՒՈՆ ՍԿՐՏԻՉԵՍՆ

Գար գայթակղութեան և խնձոր դժտութեան, Ո-  
մանց համար նեան, ուրիշներու համար Յիսուս Փրկիչ:

--Ներայր, Լեւոն Մկրտիչեանին քուէ կը տրուի°...

--Լեւոն Մկրտիչեանէն զատ Երեսփոխան ըլլալու  
արժանի մարդ չի կայ:

--Ոտքը մէջը դնելուն պէս ամէն բան տակնու-  
վրայ կը դարձնէ:

--Գլուխը մէջը խօթելուն պէս ամէն բան կը  
կարգադրէ:

--Աշխարհիս ամէնէն մեծ էնթրիկանն է:

--Հին և նոր դարերու ամէնէն ուղղամիտ մարդն է:

--Ոտքս քար մը կապեն ու զիս ծովը նետեն, նո-  
րէն քուէս անոր չեմ ի տար:

--Կախաղան հանեն ու չուանը ծիտս անյունեն,  
իրմէ զատ մարդու քուէ չեմ ի տար:

Չորս հինգ տարուան առջի պայքարը անչուշտ  
մեծ բաժին մը ունի այս ընդդիմամարտ գնահատում-  
ներուն մէջ: Զանգուածային հակառակութիւնը որ  
այն ատեն սցուած էր իրեն դէմ, մինչև հիմակ հազիւ  
թէ փշրուած է և իր ընտրութիւնը կարելի է համա-  
րել ժողովրդային ողջմտութեան մէկ փայլուն յաղ-  
թանակը:

Խելացի, կարող ու ճարպիկ է, նոյնիսկ իր թըշ-

նամիններուն վկայութեամբ: Ստիպուած է անպատ-  
ճառ օգտակար ըլլալ Երեսփոխանական ժողովին :

15

**ՊԵՐՃ ՕՀԱՆԵԱՆ**

Մորթեալ ոչխար մը զոր գոհ ենք սահմանադրու-  
թեան փարախը վերադարձած տեսնելով: Առաջնորդա-  
րանը անձանօթ չէ իրեն, երկար տարիներ անդամակ-  
ցած է ազգային իշխանութիւնը ներկայացնող առա-  
ւել կամ նուազ օրիաւոր մարմիններու :

Իր գործունեայ, բարեմիտ և հաճոյակար բնու-  
թեամբ սիրելի եղած է ամենուն:

Իր լրջութիւնը մակերևութային է և անհետանք,  
իսկ զուարթ թեթևութիւնը անփնաս ու հաճելի:

Օգտակար ըլլալու կը ջանայ միշտ և երբեմն կը  
յաջողի:

Որ և է ազգականութիւն չունի Բարսեղ Օհան-  
եանի հետ որ անցած շարաթ գիշեր հեռագրով (թիւ 2)  
հինգ ոսկի նուիրած էր Տիգրան Երկաթ Միութեան:

16

**ԻԵՒՈՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ**

Համակրելի երիտասարդ մը, գործունեայ, աշխոյժ  
և զիւրահաղորդ, ծարտարազէտ և երկրաչափ, ամէն  
լեզուով կրնայ խօսիլ շէնքերու հետ:

Քիչ մը կատակասէր. վա՛յ եթէ ձեռքը միամիտ մը  
իյնայ, կարող է բանը գործը ձգել և ամիսներ տեւող  
խաղ մը սարքել անոր զլխին, քանի մը բարեկամու-  
րու հետ վրան խնդալու համար: Երեսփոխանի լուրջ  
պաշտօնը յուսանք թէ բարեփոխէ իր այս նկարագիրը:

Ընկերութիւնը հաճելի է և բարեկամութիւնը  
անխախտ: Իր վարած բոլոր ազգային պաշտօններուն  
մէջ կրցած է օգտակար ըլլալ և համակրութիւններ  
շահիլ:

17

**Յ. ԱԶՆԱԻՈՐԵԱՆ**

Վաճառական, բնիկ Տրապիզոնի, երկար տարի-  
նեղէ ի վեր հոս հաստատուած.

Հրապարակին վրայ պատուաւոր մարդու համբաւ  
կը վայելէ, իսկ ազգային շրջանակին մէջ՝ ազգասէրի  
համբաւ: Այս երկու համբաւները զիրար չեն հակա-  
սեր և բաւական են երեսփոխանական պաշտօնին  
համար :

18

**ԳԷՈՐԳ ԻՔԷՔԵԱՆ**

Մխախտտի վաճառական: Խնամակալութեան գէժ  
կռուող մը առաջին վայրկեանէն: Աւելի գործի մարդ,  
քան խօսքի: Դրական մինչև եղունգները, ժառան-  
գարար մնացած վերացականութեան ամբողջ իր բա-  
ժինը տուած ըլլալով եղբայրներուն, որոնց մին ճար-  
տար դերասան մըն է և միւսը՝ տաղանդաւոր բանաս-  
տեղծ մը :

**ԽՄԲԱՏԵՂԻՆ**

Անցեալները ծանուցած էինք թէ տեղւոյս Հայ  
Յ. Դաշնակցութեան խմբատեղին լաւագոյն պայման-  
ներով վերաբանալու համար խումբ մը երիտասարդ-  
ներ մէկ ոսկինոց 400ի չափ տոմսակ հրապարակ պի-  
տի հանեն և ժողովրդային փոխառութեան պիտի դի-  
մեն, վարձքի և կահաւորման ծախքերը հողալու հա-  
մար և հրաւիրած էինք Ալեքսանդրիոյ հայ հասարա-  
կութիւնը որ համակիր ընդունելութիւն մը ընէ այս  
ձեռնարկին :

Այժմ գոհութեամբ կը լսենք թէ տոմսակները հը-

բազարակ ելած են և կարճ միջոցի մը մէջ կէսէն ա-  
ւելին սպառած: Ճողովրդին զոյց տուած այս համակ-  
րութեան նշանը ապացոյց մըն է որ մնացած տոմ-  
սակներն ալ շուտով պիտի սպառին և մօտ օրէն պի-  
տի ողջունենք խմբատեղին և միանգամայն ընտանե-  
կան զբօսարան մը:

Ինչպէս յայտնի է, նուիրատուութիւն մը չէ, այլ  
փոխատուութիւն մըն է որ կ'ընէ տոմսակ ընդունո-  
ղը: Խմբատեղիին քացումէն ետքը ամէն ամսուն վեր-  
ջը վիճակահանութեան միջոցով պիտի վճարուին 12  
տոմսակ, այնպէս որ տարուան մը միջոցին արդէն  
վարչութիւնը վերադարձուցած պիտի ըլլայ 144 տոմ-  
սերու փոխարժէքը և երեք տարին չլրացած՝ ամբողջ  
գումարը:

Այս փոխառութեան պատասխանատու է վարչու-  
թիւնը որ կազմուած է հետեւեալ անձերէ. Տ. Սեդրակ  
Գարրիէլեան, Տ. Ստեփան Թաշճեան, Տ. Միհրան Կա-  
րապետեան, Տ. Գրիգոր Նազարէթեան և Տ. Բարսեղ  
Շահպաղ:

Կը լսենք թէ վարչութիւնը Պապ Սիրաբայի օգա-  
ւէտ ու մաքուր փողոցներէն միտին վրայ արդէն զը-  
տած է պարտէզի մէջ յարմար շէնք մը որուն վերի  
յարկի սրահները պիտի յօտկացուին խմբատեղիի, իսկ  
ներքնայարկի և պարտէզը պիտի վերածուի զբօսա-  
վայրի մը ուր հայ երկսեռ այցելուները կարենան վա-  
յելել հաճելի ժամանց մը:

### ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԵՍԸ

Պսակելու համար ժողովրդական պայքարին յաղ-  
թանակը, շատեր փափաք յայտնած են փայլուն հան-

դէտով մը տօնելու, ի ձայն կրաժշտութեան, գաւաթ-  
ներու բազմանց և ճառարխօսութեանց, Սահմանա-  
դրութիւնը, որ իբրև նոր Ղազարոս, յարեաւ ի մեռե-  
լոց :

Այս փափաքին մարմնացում տալու համար, նո-  
րընտիր երեսփոխան Տ. Գառնիկ Չպուրճեան քսան  
ոսկի նուէր մը ըրած է, առաջարկելով իր նոր պաշ-  
տօնա՛լիցներուն որ իրենք ալ նիւթապէս օժանդա-  
վեն հանդէսի կազմակերպութեանը Ամէնքն ալ հաւա-  
նութիւն յայտնած են :

Կը լսենք թէ հանդէսը տեղի պիտի ունենայ յու-  
նիս 24ին՝ կիրակի օր, Չաթպիի ձովեղերքը, նորա-  
շէն քաղինոն :

Տ. Գառնիկ Չպուրճեան խոստացած է հարկ եղած  
թուամիտի վաճօնները տրամադրել տալ հանդիսական-  
ներու փոխադրութեան համար :

Մասնախումբ մը մը կազմուած է հանշէտին կարգա-  
պահութեան հսկելու համար :

## ՉՍՆՁԻՊՍՐԵԱՆ ՆԱԽԱԿԱՆՆԻ

Ալաբա-Սանտրիա, 6 Յունիս, 1906

Սիրելի Բարեկամ,

Գիտեմ որ բարկացած էք ինձի դէմ, ինչպէս նա-  
և Ալզաա Սօսքոյի ընթերցողները, սոյսչափ երկար ա-  
տեն լռութիւն պահելուս համար: Պատճառը խոստո-  
վանիմ, թէ ձեր ներսղութիւնը առնելու և թէ խիզ-  
ճրս հանգստեցնելու համար: Պարզապէս կաշառուե-  
ցայ Գաֆր զաղթականութեան Պապուլա՛ Ափրում փա-  
լայէն և իր մտերիմ գաւազանակիր Հաքուփա Ուր-

զուրէն: Այո՛, ես գրագէտս, ե՛ս «Ազատ Խօսք»ի մասնաւոր թղթակից և անդամ Բարեգի Մամուլի Ընկերակցութեան, և պատուակալ աշխատակից Թայմըզի, գրիչս, կործիքներս, համոզումներս, ինչ որ ունէի, ինչ որ չունէի, ամէնքը մէկանց ծախեցի 40 էնիկայի: Դրամները երկու ամսուան մէջ վատնեցի Ալաքա-Սանտրիայի այն վայրերը որոնց մասին մանրամասնօրէն խօսելու ամօթխածութիւն կը զգամ: Դիմեցի կրկին մեր բարեկամ Ափրում Բալայի որ այս անգամ երկու վուշաշաներու ձեռքով զիս զուրս նետել տուաւ: Հասկցայ թէ ա՛լ յոյս չի կար այդ կողմէն, ուստի որոշեցի չեղեալ համարել լուսմնալու մասին տուած խոստումս ու կրկին շարունակել ընդմիջուած թղթակցութիւններս:

Արարքս զուցէ շատ պատուաւոր չհամարուի եզրիպտական բարոյականի տեսակէտով, բայց շատ պարկեշտ և գովելի է զանգիպարեան տեսակէտով, Բաց աստի, Ապագան, Պատմութիւնը, Յաջորդ Աերունզը վերջապէս մին այն դատաւորներէն որոնց վճիռը տասը բարա չարժեր մեզի համար, թո՛ղ դատէ ըրտծս:

Երկու ամսէ ի վեր այնքա՛ն կարևոր իրողութիւններ տեղի ունեցան քաֆր հասարակութեան մէջ որ ստիպուած եմ քիչ մը ընդարձակ ընել թղթակցութիւնս, բայց վստահ եմ որ ընթերցողները մեծ հետաքրքրութեամբ պիտի կարդան, մանաւանդ երբ իմանան թէ Քաֆր հասարակութեան ծանօթ Պապուլան՝ ափրում Բալա և արբանեակները վերջապէս «ընդունեցան իրենց հողաթափները»:

Հողաթափի ընդունելութիւնը զուտ Քաֆր սոզգային արարողութիւն մըն է զոր պարտք կը զգամ քանի մը բառով բացատրել:

Ամէն անգամ որ նոր մարմին մը պաշտօնի գլուխ անցնի, վարելու համար Քաֆրներու հանրային գործերը, նոր մարմնոյն անդամները իրենց հողաթափներէն

մէյմէկ զոյգ կը բերեն և կուտան աջակողմի պատին վրայ յատկապէս զետեղուած քամերու վրայ կը կախեն, իբր խորհրդանշան իրենց իշխանութեան. այդ հողաթափները հոն կը մնան և պաշտօնական պատիւներ կ'ընդունին այնքան պտեն որ Պապուլան և իր ընկերները պաշտօնի գլուխ են: Եթէ Պապուլան ուզէ իր ընկերներէն մէկը հրաժարեցնել, լուր կը զրկէ անոր ըսելով. «Եկուր, հողաթափներդ ա՛ռ»: Ինչ որ կը նշանակէ. «պաշտօնէդ զազրած ես»: Իսկ պաշտօնանկ եզող անդամին տեղ նոր մը ընտրելու համար բաւական է նշանակեալ անձին երկառոց մը գրել սա փմաստով. «Կրնաք վաղը ստտու ձեր հողաթափները կախել կրտատան աջակողմեան պատի քամերէն». այսինքն՝ «Նազակաթ Հուրխուրի անդամ ընտրուած էք»:

(Շարունակելի)

ԲՕԼ ԹՌՕՆ

## New Victoria Hotel ՍԱՆ ՍԹԷՖԱՆՕ

ՆՈՐ ՎԻՔՏՈՐԻԱ ՕՍԷԼ Ազեքսանդրիոյ Մօմ  
ՅՈՒՆԻՍԻ ՄԷՋ ԲԱՅՈՒԱՄ Հալթ Թիւ 2

Առաջին կարգի օթել, մասնաւորապէս շինուած, այժմու բոլոր հանգստաւէտութեան պայմաններով: Հիանալի ճաշարան, սալօն, ծխարան: Մասնաւոր ճաշարան: Ընդարձակ պատշգամ և պարտէզ: Ելեքորբակիան լոյս 2ԱՓԱԽՈՐ ԳԻՆ, Թելեֆօն Թիւ 310: Հեռագրական հասցէ՝ Նիւ Վիքթորիա, Ռամլէ: Թնամվայով տասը վայրկեան Ազեքսանդրիայէն:

Ս. Ֆ. Ռէշիկ, ՏՆՕՐԷՆ

Յ. Գ.--Մասնաւոր գին կառավարական պաշտօնեաներու և զինուորականներու համար: Բոլոր սենեակները ծովուն վրայ կը նային:

Մ Ե Ծ Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ո Ց  
ՓՈՐԱԳՐԱԿԱՆ ԵՒ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆՑ

Գ. ՆԱԶԱՐԷԹԵԱՆ

Հ Ա Յ Ց Ա Յ Ց Ի Չ

Մասնային եւ Տէրախ երկարդ, վարչութեանց. եւն. եւն.

15 RUE STAMBUL 15  
ALEXANDRIE, Egypte

Այս աշխատանոցին մէջ կը պատրաստուին Պը-  
ղինձէ և Նիբէլէ գուռի Բլաքներ, Բաուչուէ, Պղինձէ,  
Պողպատէ կնիքներ, արծաթէ և ոսկիէ մծնօղրամներ,  
Թամիօններ, ևն. Ջինկօղրափիի և Կալվանօղրաթիի  
վերաբերեալ գործեր:

Տպարանական ամէն տեսակ գործեր հայ և օտար  
լեզուներով: Հարսանեկան հրաւիրագիրներ, այցա-  
քարտներ, նամակազուլուխներ, ստացագիրներ, հասցե-  
քարտներ, մահազուլներ, հայերէն պրոշիւրներ, գիրքեր ևն:  
Մասնաւոր խնամք ճաշակի և մաքրութեան: Չա-  
փաւոր զին:

Այս աշխատանոցը ջերմապէս կը յանձնարարենք  
Աղեքսանդրիոյ, Գահիրէի և բոլոր եգիպտահայ ազ-  
գայնոց, վատահայնելով թէ հոն եղած բոլոր յանձնա-  
րարութիւնները ամենամեծ խնամքով կը կատար-  
ուին և զոն կը ձգեն ամէնէն դժուարահաճ ճա-  
շակները:

Օտար գործատուներու դիմելէ առաջ հաճեցէք  
անգամ մը այցելել սոյն աշխատանոցը:

Պատասխանատու-Խմբագիր Ե. ՕՏԵԱՆ

Տպր. Փորգր. Գ. ՆԱԶԱՐԷԹԵԱՆ, Ալեքսանդրիա.